## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ




ԳԵՆԴԵՐ







## Լուսաբանում




# «ՄԻԱՍԻՆ»-Ի ՀԵՏ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի նոյեմբերի 15-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության ուսանողներն այցելեցին «Միասին» Հիմնադրամ: Այցելության նպատակն էր սովորողներին ծանոթացնել կրուասանի պատրաստման դասական բարդ եղանակին: Հմուտ հրուշակագործը վարպետաց դասի ժամանակ մանրամասնորեն ներկայացրեց և ցուցադրեց կիսալուսնաձև նրբահամ բլիթների խմորի առանձնահատկություններին և պատրաստման եղանակին:

Խոհարարական արտահագուստով կրթօջախի լավագույն ուսանողները ևս իրենց անմիջական մասնակցությունն ունեցան կրուասանի թխման գործընթացին՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը և անվտանգության տեխնիկայի տիպային կանոնները:

Վերջնարդյունքում ապագա խոհարարները համտեսեցին իրենց ձեռքով պատրաստած անուշեղենը:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







Լուսաբանում




## ՄԵՐ ԿՐԹՕՋԱԽԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ…

2022 թվականի նոյեմբերի 17-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի հավաքական թիմը գրանցեց իր հերթական հաղթանակը՝ մասնակցելով Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի և ԽորանԱրդ ակումբի կողմից կազմակերպած «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ-մրցույթին:

Միջոցառումը նվիրված էր ուսանողների միջազգային օրվան և նպատակ ուներ զարգացնելու երիտասարդ սերնդի ընդհանուր գիտելիքները: Խաղ-մրցույթը հմտորեն վարեց «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ» ՀԿ-ի ղեկավար Ս.Մարտիրոսյանը, ում շնորհիվ միջոցառումն իր ինքնատիպությամբ տարբերվող էր ու համապարփակ:

Ապագայի հանդեպ ձգտումներով և երազանքներով լցված սովորողները գոհունակությամբ և բարձր տրամադրությամբ նշեցին իրենց հաղթանակը՝ մեջբերելով. « Երիտասարդությունը բախտավոր է նրանով, որ ապագա ունի»:

Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի և ինտելեկտուալ միջոցառումների կազմակերպիչ Ռ.Պետրոսյանի աջակցությամբ և հետևողական աշխատանքների արդյունքում ուսանողները միշտ բարձր են պահում կրթօջախի պատիվը:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## ՄԵՐ ՀԱԶՈՂՎԱԾ ԵՐԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՅՍՕՐԸ ԵՎ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԱՊԱԳԱՆ

2022 թվականի նոյեմբերի 22-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում տեղի ունեցավ ուսանողների միջազգային օրվան նվիրված միջոցառումը: Միջոցառման նպատակն էր ներկայացնել ուսումնարանի կրթա-դաստիարակչական հաջողված փորձը, ձեռքբերումները, ուսանողական խորհրդի ծավալած արդյունավետ գործունեությունը, խթանել ուսանողների նպատակային ուսուցմանը, ստեղծել հետադարձ կապ ուսումնարանի շրջանավարտների հետ՝ ձևավորելով մնայուն արժեքներ, զարգացնել շուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների նկատմամբ շոշափելի հետաքրքրություն:

Միջոցառումը մեկնարկեց շրջանավարտների ողջույնի խոսքերով, որոնք լիցք հաղորդեցին օրվա խորհրդին: Մեծ հանդիսավորությամբ նախկին ՈՒԽ նախագահը էստաֆետը հանձնեց նորընտիր նախագահին: Սկիզբը խոստումնալից էր. դահլիճում հնչեց առաջին կուրսեցիների երդման արարողությունը: Ողնորիչ էր կրթօջախի տնօրեն տկն. Աharonյանի ողջույնը ուսանողներին, որն ուղեկցվեց պատվոգրերի հանձնմամբ՝ տարբեր բնագավառներում հաջողություններ գրանցած ուսանողներին: Սովորողներին մեծ շուքով հանձնվեցին ուսանողական տոմսերը, որոնք երաշխիքն էր ուսումնառության ու հասունության հեռանկարային ուղու:

Միջոցառման ընթացքում՝ րոպեական լռությամբ հարգանքի տուրք մատուցվեց նահատակված հայորդի զավակներին, որոնց շարքերում էին նաև կրթօջախի մարտիրոսված ուսանողները:

Միջոցառումն առավել դիտարժան դարձրեցին ուսանողների գեղարվեստական անզուգական կատարումները:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## ԳԻՏԵԼԻՔԻ ՄԻ ՄԵԾ ՊԱՇԱՐ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԻՑ

2022 թվականի նոյեմբերի 24-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության դասախոս Ա. Պետոյանի նախաձեռնությամբ՝ տասնհինգ ուսանողներ մասնակցեցին հյուրանոցային, ռեստորանային և սրճարանային բիզնեսին վերաբերող վարպետաց դասին: Վերջինս կազմակերպել էր «ՊրոՐեԿա» /՛՛ProReCa՛՛/ ընկերությունը՝ նպատակ ունենալով հարստացնել վաճառքի և սպասարկման ոլորտի մասնագետների գիտելիքների պաշարը: Հմուտ մասնագետները կիսվեցին իրենց փորձով, խորքային գիտելիքներով և մասնագիտական հմտություններով: Վարպետաց դասի նյութը լայնածավալ էր, ուսանելի և միտված էր նոր մարտահրավերներին աչալուրջ վերաբերվելուն, աշխատաշուկայի մեծ պահանջարկին և հյուրանոցային, ռեստորանային ու սրճարանային ոլորտներում սպասարկման բարձր որակի ապահովմանը՝ խթանելով բիզնեսի զարգացումը:

"ProReCa" ընկերության հիմնադիր տնօրեն Սյուզի Միքայելյանը, ռեստորատոր Գարիկ Հովհաննիսյանը, զաստրոմիքսոլոգ Գեղամ Կազարիսը, շեֆ-խոհարարներ Ռաֆիկ Սինանյանը և Արայիկ Ամզայանը, պրոֆեսիոնալ լուսանկարիչ /Food photographer/ Երվանդ Փափազյանը և այլոք հանգամանալից ներկայացրեցին վերոնշյալ ոլորտների հաջողված փորձը, պահանջվող ընթացակարգի և նորմերի պահպանման անհրաժեշտությունը:

Վարպետաց դասը նշանակալից էր, սովորողների հետաքրքրվածությունը՝ լիարժեք:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ




ՀՅՈՒՐԵՐԻ ՀՈՍՔ
SMM
SEO
WEB
ADS
MAPS
EVENTS
BOOKLET
FLYER
PR
INFLUENCERS
PPC






## ՕՐԻՆԱՊԱՀ ԴԵՌԱՀԱՍԸ՝ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

Կրթօջախի ուսմասվար Ա. Մարգարյանը և Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները 2022 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 12:00 –ին, մասնակցեցին Շիրակի մարզի դատախազության և Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի կողմից կազմակերպված հանդիպում-քննարկմանը: Միջոցառման նպատակն էր՝ կանխարգելել անչափահասների շրջանում իրավախախտումները, վերացնել դրանք ծնող պատճառներն ու կատարմանը նպաստող պայմանները: Հանդիպում քննարկմանը ներկա էին ՇՄ դատախազության դատախազ Ք. Բաղդասարյանը, Շիրակի մարզպետարանի «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության» բաժնի պետ Լ. Գորգինյանը, Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Մուշի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ Գ. Պետրոսյանը, տարբեր ուսումնական հաստատությունների տնօրեններ, վերադասներ, ուսանողներ և աշակերտներ:

Ակտիվ քննարկում ծավալվեց ղեկավար այրերի և դեռահաս սովորողների միջև, քանզի արծարծվող թեմաները տրամաբանորեն շաղկապված էին և արդիական: Բարձրաձայնվող հարցերը վերաբերում էին անչափահասների իրավունքների պաշտպանությանը և ծավալվում մինչև վարչական իրավական խախտումներ, տարաբնույթ հանցագործությունների բացահայտում, ուղղիչ աշխատանքների պլանավորում, կանխարգելում: Համապատասխան կառույցների պատասխանատու և լիազորված անձանց կառուցողական արդյունավետ աշխատանքներին ներգրավվածությունը նպատակ ուներ խթանել դեռահասի լիարժեք զարգացումը, զերծ պահել երիտասարդ սերնդին վնասակար սովորություններից և տարաբնույթ հանցագործություններից, ունենալ քաղաքակիրթ հասարակություն:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ









## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Մեր Մասին | Կրթություն | Դիմորդ | Ուս. խորհուրդ | Կոլեկտիվ | Իրավական ակտեր | Ծրագրեր | Կապ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում
20 08 2022 թ.
Մ/մ նախագահ՝ Ա. Դանիելյան

Պլան
բաց դասի

Մասնագիտություն՝ «Վարսավիրական արվեստ և գարդային դիմահարդարում՝ վարսահարդար»
Կուրս՝ վարսահարդար III
Անցկացման ամսաթիվ՝ 28 11 2022 թ.
Թեմա՝ «Գեղեցկության գինը»

Նպատակ
- Հաստատցնել մասնագիտական գիտելիքները
- Ցուցադրել մասնագիտական կարողությունները
- Համադրել մազերի երանգները ատրովանքի հետ՝ հաշվի առնելով գլխի, դեմքի ձևերը
- Կարևորել ներկած մազերի առողջ շրջկ և արտահայտիչ դարձնելու առավելությունը
- Զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունները
- Զնավորել գեղագիտական ճաշակ և սերմանել գեղեցիկը զնահատելու կարողություն

Նախապատրաստական փուլ
- Ուսանողներին հանձնարարել փնտրել և մշակել թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն/ամսագրեր, նկար/
- Ստեղծել թեմատիկ բուկլետներից սահիկաշար կամ տեսանյութ
- Աշխատանքային գործընթացի նկարահանում, տեսանյութի ստեղծում, մոնտաժում/բաց դասի ընթացքում ցուցադրելու նպատակով/

Ընթացք

Տեսական գիտելիքների ներկայացում, մեկնաբանում սահիկաշարի միջոցով
- վարսավիրության գեղագիտական կողմը
- ժամանակակից կտրվածքներ 2022-2023
- կտրվածքների «բնավորությունը» ըստ գույների
- կտրվածքները ըստ անհատի բնավորության/ընտրած մասնագիտության

Գործնական աշխատանքների ցուցադրում և մեկնաբանում

Մոդելավորել կտրվածքներն՝ ըստ անհատի բնավորության/ընտրած մասնագիտության, զբաղվածության
- լրագրող
- մանկավարժ
- ուսանող
- մարզիկ
- գործարար
- գործավար

Վերջաբանություն

Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, կարողություններով հմտացած, հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններով և գեղագիտական ճաշակով օժտված, ուսանողներ։

Դասախոսներ՝ Կ. Գաբրիելյան

## Լուսաբանում




# «ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ»

2022 թվականի նոյեմբերի 29-ին «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» երրորդ կուրսում անցկացվեց «Գեղեցկության գինը» թեմայով բաց դասը։ Դասի նպատակն էր զարգացնել ինքնուրույն աշխատելու և հետազոտական աշխատանքներ կատարելու ունակություններ, ցուցադրել մասնագիտական կարողություններ, համադրել մազերի երանգները սանրվածքի հետ՝ հաշվի առնելով գլխի, դեմքի ձևերը, մարդաչափական տվյալները, ձևավորել գեղագիտական ճաշակ և գեղեցիկը գնահատելու կարողություն։

Ուսանողները բաց դասը սկսեցին ողջույնի յուրատիպ մեկնարկով։

Դիտարժան սահիկաշարերի և տեսանյութերի ցուցադրմանը զուգահեռ ուսանողները հանգամանալից ներկայացրեցին գեղեցկության չափանիշները վարսավիրական արվեստում՝ անդրադառնալով անհատի մարդաչափական տվյալներին, բնավորությանը, մազերի առանձնահատկություններին, մասնագիտական ուղղվածությանը, կտրվածքի ճիշտ ընտրությանը։ Նշանակալից էր ուսանողների ցուցադրած փորձը, որը բնութագրում էր հիմնական գույների միախառնումից՝ սառը և տաք գույների ստացման գործընթացը։

Գովելի էր այն փաստը, որ ուսանողների կողմից նախապես նկարահանվել էին առաջին կիսամյակի ընթացքում մոդելավորած սանրվածքների կատարման ընթացքը, որը լայնէկրան ցուցադրվեց լսարանին։

Բաց դասն ավարտվեց Շիլլերի թևավոր խոսքերով.« Ով գեղեցկությունը չի կարող պաշտպանել, անարժան է նրա ոսկե պարգևին»։

Դասավանդող՝ Կ.Գաբրիելյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ












## ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ԼԵԳԵ՛ՆԴ.

## ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ 65

2022 թվականի նոյեմբերի 29-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվեց տեսաֆիլմի դիտում՝ նվիրված ազգային հերոս և լեգենդ դարձած Մոնթե Մելքոնյանի 65 ամյակին։

Օրը նշանակալից էր կրթօջախի ուսանողների համար.ներկաները հպարտ էին, որ ԱՄՆ-ի Վիսեյլիա քաղաքում ծնված հայորդին հետագայում պիտի դառնար Հայաստանի և Արցախի Հանրապետությունների Ազգային հերոս։ Նա պիտի զգաստացման կոչով հանդես գար ճակատային մարտիկների համար՝ ապրեցնելով, ոգեկոչելով ողջ հայ ժողովրդին.«Եթե կորցնենք Արցախը, ապա մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը»։ Մոնթեյի համար Արցախի պաշտպանության կազմակերպումը ենթագիտակցության մեջ արմատացած նպատակ էր, իսկ «Արցախի հերոս» կոչումը առանձնահատուկ վաստակ։

Ուսանողները եկան այն համոզման, որ.«Մոնթեն մեզ սովորեցնում է հաղթել»։

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է մ/մ թիվ 2 նիստում 30 08 2022թ.

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման նախագահ՝ Ռ. Պետրոսյան

### ԲԱՑ ԴԱՍԻ ՊԼԱՆ

**Պատասխանատու՝** Ա. Բաբոյան
**Անցկացման ամսաթիվը՝** 30.11 2022թ.
**Մասնակիցներ՝** I կուրսեցիներ
**Թեմա՝** ՃԻՇՏ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ. ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱՊԱՏ
**Նպատակը.**

- Սերմանել հոգատար վերաբերմունք սեփական երկրի, հայրենի քաղաքի և շրջապատող տարածքների նկատմամբ
- Վերլուծել ռազմավարության արդյունավետ իրականացման փուլերը՝ մաքրելու և մշտապես մաքուր պահելու շրջակա միջավայրը
- Ձևավորել սեփական դիրքորոշումը

**Վերջնարդյունքները.**
**Սովորողը կկարողանա**

- ստեղծել մաքուր տարածք
- պահպանել էկոտարածքը
- ձևավորել ստեղծված համապատասխան մշակույթ

**Նախապատրաստական աշխատանքներ**

- Մասնակիցներին նախօրոք հանձնարարել կատարել հետազոտական աշխատանք, պատրաստել սահիկաշար

**Ընթացքը.**

1. Ներածական խոսք /նպատակի ներկայացում/
2. Սահիկաշարի ցուցադրություն՝ հիմնական նյութի մատուցմամբ

- Սխեմատիկ գծապատկերների ստացում, ներկայացում ստորև նշված թեմաների վերաբերյալ.

«Թափոնների հինգ աստիճան հիերարխիա»

«Գծային տնտեսություն»

«Շրջանաձև տնտեսություն»

3. Կատարված աշխատանքների ամփոփում և ուսանողների կարծիքների բարձրաձայնում

## Լուսաբանում




# «ՃԻՇՏ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ՝ ՄԱՔՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐ»

Նոյեմբերի 30-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Ճիշտ ապրելակերպ. մաքուր միջավայր» խորագրով բաց դասը՝ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ առաջին կուրսի ուսանողների մասնակցությամբ: Նպատակն էր սերմանել հոգատար վերաբերմունք սեփական երկրի, հայրենի քաղաքի և շրջակա միջավայրի նկատմամբ, ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել մշակույթ և ճիշտ դիրքորոշում՝ մաքրությունը արժևորելու և գերագնահատելու պարտադիր պայմանով:

Ներկայացվեց աշխարհում, այդ թվում Հայաստանում, առկա խնդիրները, աղբահանության իրականացման գործող տարբերակները և առաջատար երկրներում՝ վերջիններիս արդյունավետ փորձը:

Սխեմատիկորեն ներկայացվեց «Շրջանաձև տնտեսություն» մոդելը, որի կիրառումը ենթադրում էր թափոնների վերօգտագործում, օգտահանում, վերամշակում և էներգիայի ստացում: Թեմատիկ սահիկաշարի միջոցով ցուցադրվեց նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող աղբահանության ներկայիս վիճակը և նկատված թերացումները:

Ուսանողները օրինակների միջոցով ներկայացրեցին Գյումրի քաղաքում իրականացվող աղբահանության աշխատանքները, որի վկայությունն էին խոսուն նկարները: Զբոսաշրջիկների և ներդրողների համար առավել գրավիչ ու հարմարավետ քաղաք դարձնելու նպատակով՝ սովորողներն առաջարկեցին աչալուրջ և հետևողական լինել շրջակա միջավայրի մշտական մաքրությանը, գնահատել էկոտարածք ունենալու կարևորությունը և որպես կարգախոս ընտրել հետևյալը՝ «Երկիր մոլորակը ոչ թե ժառանգել ենք մեր նախնիներից, այլ փոխ ենք առել մեր սերունդներից»:

Պատասխանատու՝ Ա. Բարոյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







## Լուսաբանում



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

# ՍՊՈՐՏԸ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ Է ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ...



2022 թվականի դեկտեմբերի 3-ին և 4-ին անցկացվեց Ձյուդոյի Հայաստանի Հանրապետության մեծահասակների առաջնությունը։ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն, փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը՝ մասնակցելով այդ առաջնությանը զբաղեցրեց 3-րդ տեղ (73կգ)։

Նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ կրթօջախի ուսանող Համլետ Պարսամյանին, ով մասնագիտական կրթությանը զուգահեռ կարևորում է սպորտը և նշում, որ. «Սպորտը դառնում է կրթության միջոց, երբ այն սիրելի է գիտակցաբար դրանով զբաղվողի համար»։




# ԳՅՈՒՄՐԻՆ ՊԻՏԻ՛ ԱՊՐԻ ՈՒ ԱՐԱՐԻ

2022 թվականի դեկտեմբերի 6-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում, տնօրենի տեղակալ Ա.Մկրտչյանի և ուսմասվար Ա.Մարգարյանի նախաձեռնությամբ անցկացվեց «Ինչպե՞ս պաշտպանվել երկրաշարժի ժամանակ» թեմայով սեմինար-պարապմունք: Միջոցառման նպատակն էր ուսանողներին ներկայացնել դեկտեմբերի 7-ը՝ որպես Երկրաշարժի զոհերի հիշատակի օր, իրազեկել աղետից/երկրաշարժից/ պաշտպանվելու միջոցների մասին, երիտասարդ սերնդին ծանոթացնել հին ու նոր կոլորիտային Գյումրու տեսաշարժան վայրերին, մինչերկրաշարժյան հայրաքաղաքի բազմաճյուղ արդյունաբերություններին (տեքստիլ-տրիկոտաժի, մեքենաշինական, շինանյութերի, սննդի, կոշիկի, կարի, փայտամշակման, ապակու և այլն), ինչպես նաև քաղաքի ակտիվ կյանքին:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգանքի տուրք մատուցեցին՝ ի հիշատակ երկրաշարժի անմեղ զոհերի:

Ա.Մարգարյանը, համաձայն 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի մասին պաշտոնական տեղեկատվության, համառոտ ձևով ներկայացրեց աղետի պատճառած անդառնալի կորուստները և հետևանքները:

Սեմինար-պարապմունքի առանցքային կետում «Ինչպե՞ս պաշտպանվել երկրաշարժի ժամանակ» թեմայով ուսուցողական տեսանյութի դիտում-քննարկումն էր:

Տխուր էին ներկաները, նրանց աչքերում կար ցավի ուափսոսանքի մի խամրած ստվեր, որը հուշում էր. «34 տարի անց դեռ շարունակում ենք առերեսվել երկրաշարժի հետևանքով ունեզուրկ և անօթևան մարդկանց տխուր ճակատագրերին, անդառնալի կորուստներին»:

Իսկ միջոցառման ավարտը հուսադրող էր ու ոգեշնչող.ծաղկուն Լենինականի և բարեկարգված Գյումրու մասին կարճամետրաժ ֆիլմը դրա վառ վկայությունն էր. փլատակներից վերհառնած Գյումրին պիտի՛ ապրի ու արարի:

***Ուսմասվար՝ Ա. Մարգարյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











Լուսաբանում




## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

2022 թվականի դեկտեմբերի 9-ից Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում մեկնարկեց խոհարարական շաբաթ:

«Խոհարարական գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների համար նախատեսվել է իրականացնել մասնագիտական ֆիլմաշարի դիտում-քննարկում, տարբեր ժամանակաշրջանների խոհարարության զարգացման պատմության տարբեր փուլերի վերաբերյալ: Հետաքրքրաշարժ ֆիլմերը ներառում են անառարկելի տեղեկատվություն անտիկ ժամանակաշրջանից մինչև հեղափոխություն:

Դասավանդող մասնագետի կողմից հանգամանալից ներկայացվեց վերոնշյալ դարաշրջանների «խոհանոցային արվեստի» զարգացման փուլերն իրենց առանձնահատկություններով:

Ուսանողներին առավել հետաքրքրական էր ազնվազարմ խավի ներկայացուցիչների նրբաճաշակ քիմքի համար նախատեսված կերակրատեսակների պատրաստման եղանակները և վերջիններիս յուրատիպ մատուցման ձևերը: Նրանք տեսաֆիլմի միջոցով բացահայտեցին խոհարարական մի շարք գաղտնիքներ՝ տարբեր տեխնոլոգիաների, սարքավորումների և բաղադրատոմսերի վերաբերյալ: Մասնավորապես ուշագրավ էր աշխարհում հայտնի ուտեստների ծագումնաբանության բացահայտումը, որոնց նախապատմությունը սկսվում է դեռևս Հռոմեական կայսրությունից. օրինակ՝ ֆրանսիական համադամ ուտեստ ՛՛Ֆուագրայի՛՛ հայրենիքը համարվում է Հռոմը:

Ֆիլմի դիտման ավարտին ծավալվեց մասնագիտական ինտերակտիվ քննարկում, և ապագա խոհարարներն իրենց տեսակետներն ու կարծիքները հայտնեցին թեմատիկ ֆիլմի կարևորության մասին:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԵԿՑԱՆՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

2022 թվականի դեկտեմբերի 9-ինԳյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքերի պաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպվեց «Հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները և ներառական կրթության դերը» թեմայով սեմինար-պարապմունք: Սեմինարավարն էր «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոնի հոգեբան Կարինե Միրզոյանը, ով իր փորձառությամբ և ինքնատիպ մոտեցմամբ լսարանի հետ քննարկեց թեմային վերաբերող մտահոգիչ շատ հարցեր: Հանդիպումը լավագույն առիթներից մեկն էր խոսելու հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական խնդիրների մասին, ովքեր ամենօրյա ուշադրության կարիք ունեն: Բարձրաձայնվեց նաև հաշմանդամություն ունեցող երեխաների՝ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու անհրաժեշտ հաջորդական քայլերի, ներառական կրթության դերի մասին՝ նշելով, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաները ամենախոցելի խումբն են կազմում և առաջնային՝ ներառման խնդիրն է: Ընդգծվեց նաև հոգեբանական բարդույթ ունեցող դեռահասների և միջանձնային հարաբերությունների ճիշտ ձևավորման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հանդիպման ավարտին սովորողները օրվա խորհրդի ընկալման երաշխիք համարեցին նախաձեռնության շարունակականությունը՝ վստահեցնելով, որ այսօրինակ հանդիպումները կդառնան հաճախակի, իսկ սերնդակիցների կողմից սահմանափակ կարողություններով անձանց նկատմամբ հոգացավ վերաբերմունքը՝ աներկբա:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

**Քննարկված է մ/մ թիվ __2__ նիստում**

30.08______ 2022թ.

Հումանիտար մեթոդմիավորման նախագահ՝ **Ք. Գրիգորյան**

**Բաց դաս անգլերենից**

«Զարմանահրաշ Ամերիկա»՝ հետաքրքիր փաստեր ԱՄՆ-ի նահանգների մասին

Դասավանդող՝ Վ. Նահապետյան

Անցկացման ամսաթիվը՝ __14__ դեկտեմբեր 2022թ.

Մասնակիցներ՝ երկրորդ կուրսի ուսանողներ

Դասի նպատակը.

- Նպաստել տեղեկությունների ընկալմանը,
- Ծանոթացնել ԱՄՆ-ի 50 նահանգներին,
- Զարգացնել խոսակցական լեզուն՝ դասի ընթացքում ապահովելով ամերիկյան մթնոլորտ,
- Զարգացնել ճանաչողական և հանրամշակութային գիտելիքները,
- Խորացնել ձեռք բերած գիտելիքները թեմայի շուրջ:

Ընթացքը.

- ✓ նախապատրաստական փուլ (սահիկաշարի պատրաստում, քարտեզի կազմում, տեղեկությունների հավաքագրում)
- ✓ բացման խոսք
- ✓ ԱՄՆ-ի վերաբերյալ տեսանյութի դիտում՝ մեկնաբանությամբ
- ✓ ճանապարհորդություն ԱՄՆ-ի 50 նահանգներով (սահիկաշարի ցուցադրմամբ)
- ✓ հետաքրքիր փաստերի, զարմանալի և զվարճալի օրենքների ներկայացում (սահիկաշարի ցուցադրմամբ)




# ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՄԵՐԻԿԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 14-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում երկրորդ կուրսերի մասնակցությամբ անցկացվեց «Զարմանահրաշ Ամերիկան» խորագրով բաց դասը՝ անգլերեն առարկայից:

Դասի նպատակն էր զարգացնել ուսանողների օտարալեզու բանավոր խոսքը, հարստացնել ճանաչողական և հանրամշակութային իմացությունը, խորացնել թեմայի շուրջ ձեռք բերած գիտելիքները:

Ամերիկյան մթնոլորտն ապահովված էր.դասը մեկնարկվեց ԱՄՆ-ն ներկայացնող անչափ հետաքրքիր տեսանյութով, որն էլ ուղեկցվեց ուսանողների կողմից անգլերեն-հայերեն մեկնաբանությամբ: Գրագետ և հղկված արտասանությունն առանձնահատուկ շունչ հաղորդեց բաց դասին: Տեսանյութը սահուն կերպով փոխարինվեց սահիկաշարի ցուցադրմամբ, վերջինս էլ ներառում էր Ամերիկայի տասնհինգ նահանգների վերաբերյալ իմաստազեղ տեղեկություններ: Հատկանշային էր ԱՄՆ-ի զարմանալի և զվարճալի օրենքները ներկայացնող փուլը, իսկ հավելյալ տեղեկություններն ու փաստերը հետաքրքրեցին ներկաներին:

Թեմայի վերաբերյալ գիտելիքների ստուգման նպատակով հարցեր հնչեցվեցին լսարանին, իսկ ուսանողների լակոնիկ և գրագետ պատասխանները վկայությունն էին դասի արդյունավետության:

Ներկայանալի էր բաց դասը եզրափակող ԱՄՆ-ի էլեկտրոնային քարտեզի ցուցադրումը՝ պատրաստված «համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ երկրորդ կուրսեցիների կողմից:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ










rst World Peopl

**Լուսաբանում**




## «ԱՄԱՆՈՐՅԱ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ»

2022 թվականի դեկտեմբերի 26-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի և «Ընտանիք» ՄՊՍԿ նախաձեռնությամբ, անցկացվեց «Ամանորյա դիմակահանդես» միջոցառումը: Կառուցվածքով և բովանդակությամբ յուրօրինակ միջոցառումը, որն անցավ ուրախ և ջերմ մթնոլորտում՝ կազմակերպվել էր ուսանողական խորհրդի ջանքերով: Օրը տոնական էր և բանական մտքով առլեցուն. տրամաբանական, հետաքրքիր և զվարճալի խաղերը, մրցույթներն առավել աշխույժ դարձրեցին դիմակահանդեսը, իսկ սահմանված մրցանակները ոգևորեցին մասնակիցներին: Միջոցառման ժամանակ հնչեցին փոխադարձ շնորհավորանքներ, դահլիճում գտնվող զվարճասեր դերահասների օգնությամբ գրվեց խաղաղությունն ավետող հեռագիրը՝ ուղղված Ձմեռ Պապիկին:

Մասնակիցներին Ամանորյա ուղերձ հղեց տնօրեն Ք. Ահարոնյանը՝ գալիք 2023 տարում մաղթելով բազում ձեռքբերումներ, նորանոր հաջողություններ, հուսառատ օրեր և խաղաղություն:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում






2022թ. դեկտեմբերի 28-ին Հայաստանում ֆրանսիական համալսարանում ընթացավ Ամանորյա տոնավաճառ - ցուցահանդես վաճառք:

Հայաստանում ֆրանսիական համալսարանը հյուրընկալել էր Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ուսանողական ընկերությունների», «Գաղափարից բիզնես» սոցիալական ձեռնարկության և կարճաժամկետ ուսուցման ծրագրերի մասնակից, արցախյան պատերազմում վիրավորում ստացած երիտասարդներին: Ցուցադրվում են նրանց ձեռքի աշխատանքները, որոնք առանձնանում են իրենց նրբաճաշակ լուծումներով և մտքի թռիչքով:

Վաճառքից ստացված հասույթն ուղղվելու է նրանց նոր գաղափարները կյանքի կոչելուն:

Սա մի նախաձեռնություն է, որը մոտիվացնում է նմուշների հեղինակներին՝ հասնելու իրենց նպատակին…

Շնորհակալություն Հայաստանում ֆրանսիական համալսարանի ղեկավարությանը նման հնարավորություն ընձեռելու համար:

***Ուսմասվար՝ Ա. Մարգարյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ


UFAR




UFAR




UFAR
GYUMRI

**Լուսաբանում**




# «ՄԵԿ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՕՐ ՇԱՆԹ-ԳՅՈՒՄՐԻ ՀՌԸ-Ի ՀԵՏ...»

2023 թվականի հունվարի 27-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը՝ ուսմասվար Ա.Մարգարյանի նախաձեռնությամբ այցելեց ՇԱՆԹ-Գյումրի ՀՌԸ /հեռուստառադիոընկերություն/, որտեղ պրակտիկ կերպով անցկացվեց «Մեդիագրագիտություն» թեմայով մեկօրյա դասընթաց: «Հորիզոն» լրատվականի գլխավոր խմբագիր Հեղինե Քուշքյանն իր մասնագիտական հմուտ փորձի շնորհիվ ինտերակտիվ ձևով վարեց դասընթացը՝ հանգամանորեն ներկայացնելով սովորողների կողմից բարձրաձայնված արդիական, կարևորագույն թեմայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Դեռահաս սովորողների հետաքրքրասիրության շրջանակն ընդլայնվեց, երբ «կեղծ և հավաստի լուրեր», «պաշտոնական լրատվական աղբյուրներ», «վստահելի ԶԼՄ-եր» հարցադրումների մասին քննարկումը բերեց ցանկալի արդյունքի:

Մեդիագրագիտության դերի և նշանակության մասին համապարփակ տեղեկատվությունը հնարավորություն տվեց ունկնդիրներին հասկանալու, որ վերջինս հմտությունների ամբողջություն է և թույլ է տալիս ձեռք բերել, քննադատաբար գնահատել և ստեղծել մեդիա:

Դասընթացի արդյունքում երիտասարդները հասկացան, որ մեդիագրագիտությունը՝ որպես «դարի պահանջ» պարտավորեցնում է լինել հասարակության գիտակից և իրազեկ քաղաքացի:

***Ուսմասվար՝ Ա. Մարգարյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

Մեր Մասին | Կրթություն | Դիմորդ | Ուս. խորհուրդ | Նորություններ | Էլեկտրոնային ամսագիր | Ծրագրեր | Կապ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման թիվ 2 նիստում
«20» 03 2022թ.
Նախագահ՝ ______Ռ.Գևորգյան

Պլան
«Բանակը մեր բերդ ամրոցն է» խորագրով ինտելեկտուալ խաղի՝
նվիրված ՀՀ բանակի 31ամյակին

Անցկացման ամսաթիվը՝ 30.01.2023թ.

Նպատակը.

1. Նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը:
2. Արժևորել նոր գիտելիքների ձեռքբերումը:
3. Զետեղել հայոց բանակի դերը պետականության զարգացման գործում:
4. Սերմանել սեր և հարգանք հայոց բանակի նկատմամբ:
5. Զարգացնել ուսանողների թիմային աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակությունը:
6. Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Նախապատրաստական փուլ
Պատրաստել պաստառներ:
Ընտրել ինտելեկտուալ խաղի հարցերը:
Պատրաստել մասնակցության հայտը և ձևավորել ժյուրիի կազմը:
Մասնակից թիմեր՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողներ/համակարգչային թիմ/, այլ ուսումնական հաստատություն, զորամաս:

Ընթացքը.
Բացման խոսք
Նպատակի ներկայացում
*I մաս*
Հիմնական փուլ /խաղի անցկացում/
*II մաս*
Արդյունքների ամփոփում
Պարգևատրական ընդմիջումներ/ասմունք, ազատ խոսք, երաժշտական կատարում՝ ջութակ/
Արդյունք.
Տրամաբանական մտածողությամբ զարգացած, թիմային աշխատանքը գնահատող ուսանողներ:

Կազմակերպիչ՝ Ռ. Գևորգյան
Մ. Կարապետյան




## «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ԲԵՐԴ ԱՄՐՈՑՆ Է»

2023 թվականի հունվարի 30-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանն ու «Ընտանիք» ՄՊՄԿ-ն իրենց հարկի տակ հյուրընկալել էին Շիրակի մարզի ՄԿՈՒ ոլորտի 4 ուսումնական հաստատությունների ուսանողների և Գյումրիում տեղակայված N զորամասի զինծառայողների:

Կազմակերպվել էր ինտելեկտուալ խաղ մրցույթ՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 31-ամյակին: Միջոցառման գեղարվեստական մասն ապահովում էր «Ընտանիք» կենտրոնն՝ իր խմբակների համերգային անզուգական ելույթներով:

Օրհներգի խրոխտ հնչյունների ներքո հանդիսավոր կերպով ներս բերվեց ՀՀ պետական դրոշը և միջոցառման մեկնարկն ազդարարեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի զինղեկ Ս.Կարապետյանն իր նշանակալից մեջբերմամբ. «Կրթություն-բանակ փոխներգործուն կապով պարտավոր ենք կրթել և դաստիարակել ազգային արժեքները սրբորեն պահպանող ապագա սերնդին՝ երկիրը պաշտպանողին, կառուցողին ու շենացնողին»:

Պատվոգրեր հանձնվեցին հրավիրված զինղեկներին՝ երիտասարդ սերնդի կրթության, ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած նշանակալից ավանդի և բեղմնավոր գործունեության համար:

Հայրենիքի պաշտպանության համար դրսևորած խիզախության և հայրենանվիրումի համար շնորհակալագրեր հանձնվեցին կրթօջախի 44-օրյա պատերազմի մասնակից ուսանողներին:

Խաղ-մրցույթն ընթացավ երկու փուլով և խաղավար Ռուստամ Պետրոսյանի կողմից առաջադրվեցին բազմաբովանդակ հարցեր:

Մրցույթի մասնակից հինգ թիմերից I պատվավոր տեղ զբաղեցրեց Գյումրիում տեղակայված թիվ N զորամասը, II տեղ՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը, իսկ III տեղ՝ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը: Գյումրու թիվ 1 և 3 արհեստագործական պետական ուսումնարանների թիմերին հանձնվեցին խրախուսական շնորհակալագրեր:

Միջոցառման ավարտին իր շնորհակալանքի խոսքով հանդես եկավ Գյումրիի N զինվորական մասի դիվիզիոնի հրամանատարի բարոյա-հոգեբանական ապահովման գծով տեղակալ՝ Օնիկ Պետրոսյանը:

***Ուսմասվար՝ Ա. Մարգարյան***

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## ՕՐԸ ՏՈՆԱԿԱՆ ԷՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ...

2023 թվականի փետրվարի 14-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը մասնակցեց Ժողովրդական Ճարտարապետության և Քաղաքային Կենցաղի Թանգարանի բակում կազմակերպած

Տյառնընդառաջի միջոցառմանը։ Հայ Առաքելական եկեղեցու տերունական սուրբ տոնի խորհուրդը ներկայացվեց Շիրակի թեմի առաջնորդարանի քահանայի կողմից, որից հետո կատարվեց Անդաստանի խորհրդավոր կարգը։ Իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ՝ վառվեց ծիսական խարույկը։ Համախմբված շուրջպարերը, ազգային երգերն ու ծիսական հյուրասիրությունը՝ խարույկի շուրջ, տոնական օրը դարձրեցին անմոռանալի։



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## «ԿՈՌՈՒՊՑԻԱ. SHIFT+DELETE» ԵՐԿՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2023 թվականի փետրվարի 25-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի հավաքական թիմը, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից ստանալով վերապատրաստումների և բանավեճի մրցաշարերին մասնակցելու հրավեր, ներկայացավ «Կոռուպցիա. Shift+Delete» ծրագրի շրջանակներում իրականացվող կարողությունների զարգացման երկօրյա վերապատրաստման դասընթացին:

Մեկնարկեց ծրագրի առաջին փուլը, որը հնարավորություն ընձեռեց ուսանողների՝ կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիայի ճանաչմանը, բացահայտմանը և հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառմանը, նպաստեց փաստերի ստուգման, մարդու իրավունքների իմացության, քննադատական մտածողության, համայնքային կառավարմանը մասնակցություն ունենալու գիտելիքների աճին և կարողությունների զարգացմանը: Սովորողների թիմը գլխավորում էին ուսումնարանի բնագիտամաթեմատիկական հանձնախմբի նախագահ, մենթոր-դասախոս Ռ.Պետրոսյանը և կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանը:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ




USAID




00:00:01 35

